ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

20 սեպտեմբերի 2019 թվականի գյուղ Տեղ

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 8 անդամներից՝

Սիլվա Գալստյանը
Համեստ Հակոբյանը
Նարինե Ջհանգիրյանը
Արգամ Լալայանը
Արտակ Աղաջանյանը
Սևադա Դանիելյանը

Բացակայում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

Սենիկ Փարսյանը
Մասիս Մկրտչյանը

Մասնակցում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Հրավիրված էին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Նիստի արձանագրումն ապահովում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն սկսվեց ժամը 14.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի **ավագանին.**

1. **Լսեց Նիստի օրակարգի մասին:** Նիստը վարող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն: Այլ առաջարկություններ չեղան:

Որոշեց (N 30)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման

նախագծի կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 20-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 31-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2019 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես <<անհայտ>> քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին:**

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

2. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 31-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N31)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-5, դեմ-1, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 31-Ն որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 5. դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0)

Դեմ է քվեարկել ավագանու անդամ Սիլվա Գալստյանը:

3. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2019 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N32)՝

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի և հաշվի առնելով Տեղ համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-5, դեմ-1, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2019 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից <<Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ին 4511 հոդվածով տրամադրել սուբսիդիա՝ 4000,0 հազ. դրամ, որից

1) 1500,0 հազ. դրամ՝ աղբահանության բաժնին,
2) 2000,0 հազ. դրամ՝ ճանապարհային տրանսպորտ բաժնին,
3) 500,0 հազ. դրամ՝ ընդհանուր բնույթի այլ դասերին չպատկանող բաժնին,

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 5. դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0)

Դեմ է քվեարկել ավագանու անդամ Սիլվա Գալստյանը:

4. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես <<անհայտ>> քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:**

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N33)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ինմասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր գյուղում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ 09-052-0117 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 3,0 հա և 2,3622 հա մակերեսներով գյուղատնտեսական հողերի կատեգորիա՝ «վարելահող» հողատեսքը, որոնց

նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել համայնքային սեփականություն:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

5. Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին:

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N34)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 3-րդ մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն աճուրդ-վաճառքի ձևով օտարելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
   1) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Տեղ գյուղ, 13-րդ փողոց, թիվ 5-6/1>> հասցեի /նպատակային նշանակությունը՝ <<բնակավայրերի>>, գործառնական նշանակությունը՝ <<հասարակական կառուցապատման>>/, 1350ք.մ. հողամասը (վկայական 30082019-09-0036, ծածկագիր՝ 09-101-0058-0032)՝ 500000(հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ հանդիսությունների սրահ կառուցելու նպատակով,
   2) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Տեղ գյուղ, Արցախի խճուղի թիվ 2/1>> հասցեի /նպատակային նշանակությունը՝ <<արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության>>, գործառնական նշանակությունը՝ <<գյուղատնտեսական արտադրական օբյեկտների>>/, 428,61ք.մ. հողամասը (վկայական 13092019-09-0061, ծածկագիր՝ 09-101-0124-0055)՝ 126000 (հարյուր քսանվեց հազար) ՀՀդրամ մեկնարկային գնով՝ սպանդանոց կառուցելու նպատակով,
2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 16.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

1 Արտակ Աղաջանյան
2 Սիլվա Գալստյան
3 Համեստ Հակոբյան
4 Արգամ Լալայան
5 Նարինե Ջհանգիրյան
6 Սևադա Դանիելյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ ***Ներսես Շադունց***